ԳԼՈՒԽ ՃԾԷ.

Ամենայն աշխարհի 'ի յերեսս երկրին հայոց ծախիւք տանէն հայոց շինեսցի տուն զարգացուցանելոյ մանկունքն անօրէնութեամբ ծնեալ կաթնատուաւ կերակրօք հանդերձիւ մինչև հասակս եօթն ամ։

ԳԼՈՒԽ ՃԾԸ.

Ամենայն աշխարհի 'ի երեսս երկրին ծախիւք տանէն հայոց շինեսցի դպրատունս 'ի միում աշխարհի երկուս, մի ուստերաց և մի դստերաց անօրէնութեամբ ծնեցելոց զի ուսուսցի ընթեռնուլ տառիւ և բառիւ հայոց մինչև երկոտասան ամս հասակի նոցայ և յապա թողցի ազատ։

ԳԼՈՒԽ ՃԾԹ.

Ամենայն ոք որ գտցի պատանի և դստրիկ 'ի վեր քանթէ երկոտասան ամօք որբ և այրի պարապ ընդ գործս աղաւաշի, հարկ 'ի վերայ նորա լիցի զի ըմբռնեցեալ մուծանէ ընդ իշխանն աշխարհին յայնմիկ և իշխանն դիցէ նմայ 'ի վերայ գործի արհեստի։

ԳԼՈՒԽ ՃԿ.

Ամենայն ոք զոր ինչ ընդունեսցի կամ խոստանասցէ նմա կալ և ՃՆալ 'ի վերայ ընդունե-